ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ԴՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»
ԱՄԱՍՏԱՍԱՆԹԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սյունյաց երկիր թերթ

Հասցե՝ ՀՀ, ք.Կապան, Շահումյան 20/32
Address: Shahumian str. 20/32, Kapan, RA
Internet: www.syuniacyerkir.am
Email: syuniacyerkir@mail.ru
Phone: (+374 0285) 5 25 63
(+374 091) 45 90 47

«30» 05 2022թ.

Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանին

Հարգելի պարոն Առուշանյան

Մեր խմբագրակազմը «Սյունյաց երկիր» մարզային պարբերականին զուգահեռ՝ 2021 թվականից հրատարակում է նաև **«Սյունյաց երկիր. Մշակութային»** եռամսյա հանդեսը:

2021-ին հրատարակվել է չորս համար, որոնցից յուրաքանչյուրը բարձր գնահատանքի է արժանացել հանրապետության գիտական շրջանակներում:

2022-ի առաջին եռամսյակում հասցրել ենք հրատարակել 5-րդ համարը, որը նվիրված է Սյունիքի երաժշտական կյանքին՝ վաղ միջնադարից մինչև մեր օրերը. ի դեպ, դա տվյալ թեման ամփոփելու առաջին փորձն է նախորդ բոլոր ժամանակների կտրվածքով:

Ներկայումս պատրաստում ենք հրատարակելու հերթական՝ 6-րդ համարը, որը նվիրված կլինի Դավիթ Բեկի գլխավորած ազգային-ազատագրական շարժման 300-ամյակին:

Նկատի ունենալով հանգամանքը, որ այդ իրադարձությունը Սյունիքի պատմության ամենափառահեղ էջերից է, մենք ամենայն պատշաճությամբ ու հետևողականությամբ ենք պատրաստում եռամսյա հանդեսի տվյալ համարը:

Համարի նյութերի նախապատրաստումն ավարտական հանգրվանում է:

Սակայն համարը տպագրության ուղարկելու համար անհրաժեշտ է մոտ 600 հազար դրամ (հարկ եղած դեպքում կներկայացնենք ծախսերի մանրամասն նախահաշիվ):

Նախորդ հինգ համարի դեպքում նույնպես աջակցությունների շնորհիվ ենք իրականացնել տպագրությունը:

Այս անգամ խնդրում ենք Ձեր աջակցությունը:

Երաշխավորում ենք գիտականորեն հիմնավորված, բարձր ճաշակով ձևավորված, շատ-շատ հարցերում սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող համարի հրատարակում:

Ակնկալում ենք, որ Դուք նույնպես բարձր կգնահատեք մեր երկրամասի պատմության հերոսական այդ էջին նվիրված հանդեսի թողարկման նախաձեռնությունը և դրականորեն կարձագանքեք սույն խնդրանքին:

Հարգանքով՝

Սամվել Ալեքսանյան

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՐԿ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՄՏԻՑ 2559
30 05 2022 թ.